

**ԿՈՒՆՏԱՐՈՍԱԿ**

24.

ԱՆԳՈՒ ՎԵՐ ՀԱՆՈՒ ԱՌՏ. ՀԱՆՁԵՐ

ՔԱՂԼՈՒՍԳԼԻՎԱՐ

**Նմբագրութեամբ՝ ԳԻՆՈՏԻ ՅԵՎ  
Պ. ՖՈԼՅԱՆԻ**

Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ  
ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ**

Ա-1  
722

**ՄԵՆՔ ՍՈՑԻԱԼԻՉՄ ԵՆՔ ԿԱՌՈՒՑՈՒՄ**

Ժողովրդական տնտեսութեան զարգացման հըն-  
գամյա ծրագիրը արդյունաբերութեան, գյուղատնտե-  
սութեան և տրանսպորտի սոցիալիստական վերակա-  
հառուցման հսկայական ծրագիրն է և միաժամանակ  
հանդիսանում է նոր կուլտուրայով, նոր կենցաղով  
նոր կյանքի կառուցման ծրագիրը:

Այսպիսով սոցիալիստական շինարարութեան Ե-  
ամյա ծրագիրը միաժամանակ կուլտուրական հեղա-  
փոխութեան իրականացման ծրագիրն է:

Սոցիալիզմը պահանջում է բարձր-կատարելա-  
գործված տեխնիկա, մանր տպրանքաարտադրութեան  
մեծազուտ, փոխարինելով ալն խողոր կոլլեկտիվ ար-  
ինդուստրացված գյուղատնտեսու-

0663

ՀՈՒՆՏԱՐՈՍԱԿ  
ՅԵՎ  
Պ. ՖՈԼՅԱՆԻ

թյամբ, հեռեաբար պահանջում ե նյութական 7 հոգեկան կուլտուրայի բարձրագույն մակարդակ:

Առանց բարձր վորակյալ մասնագետների, առանց մասսաների հասարակական մակարդակը բարձրացնելու, կարելի չե արդյոք մտածել ստեղծելու սոցիալիստական տեխնիկա, սոցիալիստական արդյունաբերութիւնն և գյուղատնտեսութիւնն: Անհնարին ե, Հենց այդպես ել դնում եր հարցը Վ. Ի. Լենինը, լերբ նա ասում եր, վոր «Անգրագետ լերկրում հնարավոր չե սոցիալիզմ կառուցել» և վոր սոցիալիստական շինարարութեան պետք ե նախորդի, նրան պետք ե ուղեկից լինի «մի ամբողջ կուլտուրական հեղափոխութիւն»:

Անգրագիտութեան հիմնական վերացումը կուլտուրական հեղափոխութեան նախադրյալն ե և դրա առաջին քայլը:

Կուլտուրական հեղափոխութեան ծրագիրը և դրա այնպիսի կարևոր մասը, ինչպիսին ե անգրագիտութեան ամբողջական վերացումը, — հանդիսանում ե ամբողջ հնգամյակի անխզելի ու անբաժան մասը, և դա պետք ե ուսումնասիրել, պետք ե հասկանալ, ինչպես հարկն ե, վորպեսզի ավելի հեշտութեամբ իրականացնել կլանքում:

Վերջապես չպետք ե մոռանալ, վոր կուլտուրական հնգամյակը հանդիսանում ե լերկրի արտադրողական ուժերի զարգացման ծրագիրը, մարդկային ուժերի վերապատրաստման ծրագիրը:

Անգրագիտութեան վերացման խնդիրն ավելի սուր և զրված մեզ մոտ՝ Հայաստանում, քանի վոր մենք համեմատաբար հետ ենք մնում շատ լերկրներից: Հետաքրքիր ե բերել մի քանի թվեր, թե ինչ

վիճակում և գրողիտուութունը հարեան խորհրդալին լեզկրներում:

Գրադեպտների տոկոսը համեմատած ազգաբնակչութեան ընդհանուր թվի հետ՝ հետևյալն է.

Վրաստանում . . . . .	36,7	տոկոս:
Հայաստանում . . . . .	25,2	»
Ադրբեջան . . . . .	18,5	»
Կենտ. Սևհող. շրջան . . . . .	37,1	»
Սիրիւրի շրջան . . . . .	30,9	»
Թուրքմենստան . . . . .	9,6	»
Ուկրեկիստան . . . . .	7,7	»

Այս թվերն ասում են, վոր Հայաստանն առաջ լինելով մի քանի լեզկրներէց, հետ և մնում մի շարք լեզկրներէց և ընդհանրապես գրավում և վերջին տեղերէց մեկը: Անգրագիտութեան վերացման հնգամյակը ընդգրկում և միայն 16—39 տ. հասակ ունեցող անգրագետներին: Այդ հասակին են պատկանում այն կենսունակ և պիտանի բանվորներն ու արհմիութեան անդամները, վորոնք տկտիվ կերպով պիտի մասնակցեն սոցիալիզմի կառուցման: Ի հարկե, դա չի նշանակում, վոր ավելի բարձր տարիք ունեցող բանվորներին ու պրոֆմիութեան անդամներին չպիտի ընդգրկենք, սակայն այդ հասակն ունեցողներին պետք և ընդգրկել առաջին հերթին: 16—39 տ. հասակ ունեցողների թիվը Հայաստանում առ 1-ն հոկտեմբերի 1926 թ. հասնում և 312.844 հոգի, վորի 71,4 տոկոսն անգրագետ և: Այս 312.844 հոգուց հայերը կազմում են 260.507 հոգի, վորի 59,6 տոկոսն անգրագետ և, թուրքերը՝ 27.909 հոգի, վորի 92,4 տոկոսն անգրագետ և, ռուսներ 8.355 հոգի, վորի 29,9 տոկ. անգրագետ և այլք 16.078 հոգի, վորոնց 74,4 տոկոսն անգրագետ և:

Այս թվերն իրենք իսկ խոսում են իրենց մասին: 1926 թվից մինչև 1928 թ. հոկտեմբեր ամիսը վերացվել է 32.000 հոգու անգրագիտությունը: Հնգամյա պլանը նախատեսում է նաև 12—15 տ. հասակ ունեցող անչափահասների վորոշ տոկոսը, վորը հնգամյակի վերջում բացարձակ թվով հավասար կլինի 23.200 հոգու:

Այսպիսով ամբողջ հնգամյակի ընթացքում պիտի վերացվի 215.100 հոգու անգրագիտությունը, վորոշոցից 76,2 տոկոս հայեր, 15,2 տոկոս թուրքեր 1,7 ռուսներ և 6,9 տոկոս այլք:

215,100 հոգին ըստ հնգամյակի տարիների բաշխվում է հետևյալ կերպ—

28—29 թ. . . . .	22.023 հոգի.
29—30 թ. . . . .	45.600 »
30—31 թ. . . . .	51.320 »
31—32 թ. . . . .	52.400 »
32—33 թ. . . . .	43.747 »

Ընդամենը՝ 215.100 հոգի:

Հետաքրքրականն այստեղ այն թուիչքն է, վոր տեղի պիտի ունենա 29—30 թվին, այսինքն, այս տարի 100 տոկոսով ավելի պիտի վերացվի քան անցյալ տարի: Այս հանգամանքը բացատրվում է նրանով, վոր այս տարի կուլտ-արշավը ավելի կազմակերպված է լինելու և հասարակական կազմակերպությունների մասնակցությունն ավելի ուժեղ է լինելու քան անցյալ տարի: Այս ընթացիկ տարում պետք է անպայմանորեն վերացնել 45.600 հոգու անգրագիտությունը, այլապես հնգամյակը կարող է վտանգվել: Այն նոր միջոցը, վորը կարմիր թելով անցնում է մեր

փողջ աշխատանքները միջև, պիտի իր ուժեղ գործադրումը գտնի անգրագիտության վերացման բնագավառում: Կուլտարշավը, սոցիալիստական մրցմանը պիտի գրավեն աշխատավորական մասսաների լայն զանգվածները: «Կորչի անգրագիտությունը» Ընկերությունը պիտի դառնա շտաբ՝ հասարակական ուժերի կենտրոնացման, կազմակերպման և ոգտագործման:

Միմիայն հասարակական կազմակերպությունների, խորհրդային հասարակացնության լայն աջակցութեամբ հնարավոր է 45.600 հոգու անգրագիտությունը վերացնել և ապահովել հնգամյակի կատարումը՝ ավելի կարճ ժամանակում:

Ըստ գավառների անգրագետների ընդհանուր թիվը արտահայտվում է հետևյալ կերպ.—

28-29, 29-30, 30-31, 31-32, 32-33 թ.թ.

Յեր. գավառ	6800	20350	17400	12110	13875
Լենն. գավառ	5500	9920	11400	12500	7281
Է. Փամբ. գ.	4100	8350	9500	10100	8430
Սևանի գ.	3700	4250	10.000	12100	90400
Ջանգեղուր.	2923	2740	3020	5590	5119

Ինչպես է հնգամյակը լուծում ազգային փոքրամասնության անգրագետների խնդիրը: Ինչպես վերը պարզվեց, Հայաստանում անգրագետների ամենամեծ տոկոսը կազմում են թուրքերը և այլք: Պարզ է, Վոք հնգամյակը նրանց նկատմամբ ավելի չէ արագացնելու տեմպը:

Ըստ ազգային հատկանիշների, պլանը հետևյալ պատկերն է ներկայացնում.

	Հայ,	Թուրք,	ռուս,	այլք.	ընդամենը
Յեր. գավառ	5012	15646	205	4563	70535
Լեն. գավ.	39062	1712	126	4701	45601
Լ. Փամբ. գ.	29499	5627	2459	2895	40480
Սևանի գ.	30553	6960	801	739	39054
Ջանդ. գ.	14644	2747	43	1995	19432
<b>Ընդամենը՝</b>	<b>163881</b>	<b>32692</b>	<b>3634</b>	<b>14893</b>	<b>215100</b>

Յեթե ըստ տարիքների քննելու լինենք, վոր առաջին տարիներում հարաբերականորեն թյուրքերի և այլքի տոկոսը ավելի չե, քան հայերինը, վորովհետև նրանց անգրագետների թիվը հարաբերականորեն ավելի շատ և:

Այնուհետև պլանում աչքի չե ընկնում ևս մի մոմենտ, վորն ունի չափազանց խոշոր նշանակութուն՝ դա կանանց ընդգրկումն և:

Վոր անգրագիտության վերացման խնդիրը նախ և առաջ «կանանց» խնդիր և, ինչպես տեղին ասել և քնն. Կրուպսկայան, այդ կասկածից դուրս և: Սակայն անցյալ փորձն ասում և այն մասին, վոր կանանց ներգրավումը մեր դպրոցներում չափազանց թույլ և չեղել, և յեթե նույն դրությունը շարունակվի, ապա կանանց անգրագիտության վերացումը կդառնա լուրջ պրոբլեմ և հնդամյակի ընթացքում չի վերացվի: Անգրագետ կանանց ներգրավելու խնդիրը պիտի դնել իր ամբողջ մեծությամբ անգրագետ կանանց ներգրավման խանգարիչ պայմանները շատ են. դրանցից հիմնականը կենցաղային պայմաններն են, վորոնք կաշկանդում են կնոջը և հնարավորություն չեն տալիս հասարակական աշխատանքներին լծվելու: Առանձնապես այդ զգացվում և անգրագիտության վերացման

քնագավառում: Շատ դեպքերում ամուսինները խոչնդոտ են հանդիսանում, թույլ շեն տալիս կանանց հաճախելու դպրոցները և վերջապես լերեխաներով ու անալին անտեսուելյամբ ծանրաբեռնված լինելը նույնպես խանգարում և հնարավորութուն չի տալիս դրոցներ հաճախելու: Ահա ինչու անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմաններ, վորոնք հնարավորություն կտան կանանց հաճախելու:

Անցյալ տարիներում անգրագիտության վերացման դպրոցներում կանանց տոկոսը 30-ից ավելի չի լեղել: 1928-29 թ. դրութունը չի փոխվում—տղամարդիկ կազմում են 64,9 տոկոս, իսկ կանայք 35,1 տոկոս: Այս հարաբերութունը ցույց է տալիս, վոր դրութունը աննորմալ է: Կանայք կազմում են ամբողջ անգրագետների 62,9 տոկոսը, իսկ տղամարդիկ 37,1 տոկոս—այնինչ կանանց ընդգրկումը 35 տոկոսից չի բարձրացել անգամ կուլտ արշավի շրջանում:

Հնգամյա պլանը ըստ տարիների նախատեսանում է հետևյալ ընդգրկումը՝ 1929-30 թ. կանայք՝ 63,8 տոկոս, տղամարդիկ՝ 36,2 տոկոս, 1930-31 թ. կանայք՝ 67,7 տոկոս, տղամարդիկ՝ 32,3 տոկոս, 31-32 թ. կանայք՝ 65,7 տոկոս, տղամարդիկ՝ 34,3 տոկոս և 32-33 թ. կանայք՝ 69,3 տոկոս, տղամարդիկ՝ 30,3 տոկոս:

Այսպիսով հնգամյակը միանգամայն ապահովում է 100 տոկոսով ընդգրկելու անգրագետ կանանց:

Սակայն այս ընթացիկ տարում թուիչը բավականին մեծ է և պահանջում է լեռանդուն աշխատանք կանանց մեծ թվով ներգրավելու համար: Անհրաժեշտ է զարկ տալ անհատական խմբակային պարապմունքներին և այնտեղ, վորտեղ հնարավոր չէ կանանց հա-

վաքել դպրոց, անհրաժեշտ և նրանց ընտկարաններին մոտ կազմակերպել 3-5-7 հոգուց բաղկացած խմբակներ: Ընդհանրապես անհատական պարապմունքների ձևը չափազանց անհրաժեշտ և լայն կերպով կիրառել: Չափազանց մեծ անելիքներ ունեն այդ ասպարիզում պատգամավորական ժողովները և ընդհանրապես բանագեղջ բաժինները:

Հետաքրքրականն այս հնգամյակում այն է, վոր հնգամյակի իրականացման ծանրութիւնը խոշոր չափով ընկնում և հասարակական կազմակերպութիւնների վրա և առաջին հերթին վողջ հասարակութիւն վրա:

Անցյալ տարիներին փորձը ցույց և տալիս, վոր ասպարատալին միջոցներով և ուժերով հնարավոր չէ այս քաղաքական խոշոր աշխատանքները կատարել:

Լուսժողկոմատն ի վիճակի չէ իր սուղ միջոցներով, համեմատաբար կարճ ժամանակամիջոցում այսպիսի խոշոր գործ կատարել: Դրա համար անհրաժեշտ է մեր մասսաների աջակցութիւնը և հասարակական կազմակերպութիւնների ակտիվ մասնակցութիւնը:

Կուլտ արշավը լավագույն կերպով ապացուցեց, թէ ինչ չոգտագործված հնարավորութիւններ և պարունակում իր մեջ մեր կազմակերպված հասարակախոթութիւնը, և յետ խելացի կազմակերպվի գործն ու ռացիոնալ կերպով ոգտագործվեն և ուժերը, այն դեպքում գործի հաջողութիւնը միանգամայն ապահովված կլինի:

Մի շարք հասարակական կազմակերպութիւններ, վորոնք պակաս չափով չեն շահագրգռված անգրագիտութիւն վերացման գործում, մինչև այժմ շատ քիչ բան են արել: Սակայն հնգամյակում նրանց մասնակցութիւնը միանգամայն ապահովված է:

215,100 հոգի անգրագետների ապահովումն ըստ կազմակերպութիւնների բաշխված և հետևյալ կարգով		
Լուսժողկոմատ . . . . .	69.557	կամ 32.3 տոկոս.
Պրոֆմիութիւններ 13.450	»	6.0 »
Կոոպերացիա . . . . .	22.127	» 10.2 »
«ԿԱՆ»-ը . . . . .	109.966	» 51.5 »
	<u>215.100</u>	100 տոկոսով

Այս թվերը բավականին պերճախոս են և կարիք չեն զգում բացատրութիւնների: Անգրագետների ընդհանուր թվից միայն 30 տոկոս և ընկնում Լուսժողկոմատի վրա, իսկ 70 տոկոս հասարակական կազմակերպութիւնների և առաջին հերթին «ԿԱՆ»-ի:

«ԿԱՆ»-ը այն կազմակերպութիւնն է, վոր իր շուրջը համախմբելով մեր վողջ հասարակայնութիւնը, նրանց միջոցով հասարակական աշխատանքների կարգով կատարում և անգրագիտութիւնն վերացման ամբողջ գործը:

Ըստ տարիների կազմակերպութիւնների մասնակցութիւնը արտահայտվել և հետևյալ կերպ.

	Լուսժող.	Պրոֆ.	Կոոպ.	ԿԱՆ.
1928—29 թ.	9.900	1450	2503	8170
1929—30 թ.	12.340	2700	5130	25440
1930—31 թ.	14.980	3400	5820	27120
1931—32 թ.	1.200	2900	4100	26200
1932—33 թ.	13.137	3000	4574	23000

Այս ընդհանուր թվերը պարզելուց հետո, անհրաժեշտ է վորոշել, թե վորքան զուամար և անհրաժեշտ հնգամյակի իրականացման համար:

29—30 թ. անգրագիտութիւնն վերացման սխառեմը միանգամայն փոխվում է: Առաջներում 3-4 ա-

միս տեվոզութեամբ դարձնելու ունեցող իրկայան-  
ները վերացվում են: Ստեղծվում են անդրազեաճների  
համար գրագիտական դպրոցներ և կիսադրագեաճների  
համար հանրագիտական դպրոցներ, տեվոզութեամբ՝  
գյուղերում 6 միս, քաղաքներում մեկ տարի:

Լիկայանների բյուջեն անցյալում լինելով ընդա-  
մենի 160 ուլբլի, միանգամայն հնարավոր չեր այդ  
գումարով ամենատարրական հարմարութիւններ ձեռք  
բերելու:

29—30 թ. գրագիտական ու հանրակրթական  
դպրոցների բյուջեն գյուղերում հավասարեցրած է  
250 ու., իսկ քաղաքներում 410 ու.: Նման բյուջեները  
հնարավորութիւն կտան ունենալու անհրաժեշտ հար-  
մարութիւնները, և դասատվի աշխատավարձը կհաս-  
ցվի սոցդաստվարի 1-ին աստ. դպրոցի դասատուվի  
աշխատավարձին: Իհարկե լուրաքանչյուր տարի աճե-  
լու լի այդ դպրոցների բյուջեները:

1929—30 թվին անգրագիտութեան վերացման  
վրա պիտի ծախսվի ընդամենը 241.612 ու., վորն ըստ  
կազմակերպութիւնների բաշխվում է հետևյալ կերպով,  
Լուսժողկոմատ 107.734 ու., Պրոֆմիութեան 28.620 ու.,  
կոսպերացիայի 54.378 ու. և «ԿԱՆ»-ը 50.880 ու.:

Ամբողջ հնգամյակում մասնակցութիւնն արտա-  
հայտվում է.

Լուսժողկոմատ	— 768.663 ու.	— 52,7 տոկոս
Պրոֆմիութիւն	— 163.130 ու.	— 11,1 »
Կոսպերացիա	— 263.413 ու.	— 18,0 »
«ԿԱՆ» . . .	— 252.908 ու.	— 18,2 »

---

1.450.114 ու.      100 տոկոս.

միս տեվոզութեամբ դալուժլուն ունեցող իրկայան-  
ները վերացվում են: Ստեղծվում են անդրազեաճների  
համար գրագիտական դպրոցներ և կիսադրագեաճների  
համար հանրագիտական դպրոցներ, տեվոզութեամբ՝  
գյուղերում 6 միս, քաղաքներում մեկ տարի:

Լիկայանների բյուջեն անցյալում լինելով ընդա-  
մենի 160 ուլբլի, միանգամայն հնարավոր չեր այդ  
գումարով ամենատարրական հարմարութիւններ ձեռք  
բերելու:

29—30 թ. գրագիտական ու հանրակրթական  
դպրոցների բյուջեն գյուղերում հավասարեցրած է  
250 ու., իսկ քաղաքներում 410 ու.: Նման բյուջեները  
հնարավորութիւն կտան ունենալու անհրաժեշտ հար-  
մարութիւնները, և դասատվի աշխատավարձը կհաս-  
ցվի սոցդաստավարի 1-ին աստ. դպրոցի դասատուվի  
աշխատավարձին: Իհարկե լուրաքանչյուր տարի աճե-  
լու լի այդ դպրոցների բյուջեները:

1929—30 թվին անգրագիտութեան վերացման  
վրա պիտի ծախսվի ընդամենը 241.612 ու., վորն ըստ  
կազմակերպութիւնների բաշխվում է հետևյալ կերպով,  
Լուսժողկոմատ 107.734 ու., Պրոֆմիութեան 28.620 ու.,  
կոսպերացիայի 54.378 ու. և «ԿԱՆ»-ը 50.880 ու.:

Ամբողջ հնգամյակում մասնակցութիւնն արտա-  
հայտվում է.

Լուսժողկոմատ	— 768.663 ու.	— 52,7 տոկոս
Պրոֆմիութիւն	— 163.130 ու.	— 11,1 »
Կոսպերացիա	— 263.413 ու.	— 18,0 »
«ԿԱՆ» . . .	— 252.908 ու.	— 18,2 »

---

1.450.114 ու.      100 տոկոս.

Ուշադրութեան արժանի արտեղ արն է, վոր «ԿԱՆ»-ը իր վրա վերցնելով ամբողջ քանակի 51,5 տոկոսը նյութականի մեջ մասնակցում է 18,8 տոկոսով: Այս հանգամանքը բացատրվում է նրանով, վոր «ԿԱՆ»-ը լինելով հասարակական ուժերի ոգտագործման կենտրոն, դասատուներին չի վարձատրում, ալ ոգտագործում և նրանց հասարակական աշխատանքների կարգով:

Այսպիսով վեր հիշված բուջեները չեն տարածվում «ԿԱՆ»-ի գծով ընդգրկված դպրոցների վրա-

Հնգամյակի հիմնական թերութիւնը կայանում է նրանում, վոր չի արտահայտում սոցիալիստական խմբերի ընդգրկումն ըստ տարիների:

Թե մեզ մոտ և թե ամբողջ Խորհրդային Միութեան մեջ գոյութիւն ունեցող վիճակագրութիւնը չի տալիս անգրագետների դասակարգային շերտավորումը: Սակայն այս թերութիւնը կորցնում է սրութիւնը, շնորհիվ Համկոմկոմի Կենտկոմի պարզորոշ դիրեկտիվայի:

Համաձայն այդ դիրեկտիվայի բանվորների անգրագիտութիւնը վերացվում է մեկ տարում և կոլլեկտիվ անտեսութիւնների ու խորհրդային տնտեսութիւնների անդամների անգրագիտութիւնը 2 տարում: Այս դիրեկտիվն արդեն իսկ առաջադրում է սոցիալական խմբերի հերթականութեանը: Առաջին հերթին բանվորներ, կոլխոզի անդամներ, բատրակներ և ալ շերտեր:

Այսպիսով, անգրագիտութեան վերացման հնգամյակը նպատակ է դնում իսպառ վերացնել անգրագիտութիւնը մեր լեռերում: Այս խնդիրը իրագործելի չէ նաև ավելի կարճ ժամանակվա ընթացքում, լեթե

կարողանանք դրա իրականացումը կազել մասսաների հետ: Միմիայն այդ դեպքում համոզված կլինենք, վոր առաջադրված խնդիրները կկատարվեն:

Վերացնելով անգրագիտութունը մեր լերկրում, մենք այդպիսով փշրած կլինենք այն արգելափակները, վորոնք հանդիպում են սոցիալիզմի կառուցման ճանապարհին և այսպիսով ստեղծած կլինենք լավագույն նախապայմաններ մեր լերկրի այնպիսի արագ զարգացման: Այս հնգամյակի կատարումը մեր մեծ ուսուցիչ է ենինի պատգամի կատարումն է. այն է՝ Վստրիդուլին լերկրում անգրագիտ չպիտի լինի»:

A  $\frac{I}{7225}$

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.  
FL0044064



A  $\frac{I}{7225}$

ՅԵՐԵՎԱՆ

1929

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՅԻ ՏՊԱՐԱՆ  
Գատվ. 211 Գրառևտվ. 2778բ տ. 10000